Funded by the European Union

WITH FUNDING FROM AUSTRIAN

HILFSWERK AUSTRIA INTERNATIONAL

*Մեկը վերականգնվող էներգետիկայի համակարգերից, որոնք Ծրագրի շրջանակներում տեղադրվել և օգուտ են բերում ՀՀ Շիրակի մարզի 19 համայնքներում*

# Արևային ոռոգման համակարգ Գուսանագյուղում

## ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

Արևային ֆոտովոլտային կայանով համալրված, խորքային հորից արտամղվող ջրով ոռոգման համակարգ

## ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Համակարգը կառուցվել է «Կանաչ էներգիան Շիրակի մարզում՝ հանուն «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի» ծրագրի շրջանակներում՝ վերականգնվող էներգետիկայի տեխնոլոգիաների կիրառման արդյունքում համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը ցուցադրելու նպատակով:

## ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝

Խորքային պոմպի միջոցով ջուրը, 50 լ/րոպե արտադրողականությամբ (ժամում 3 խորանարդ մետր, կամ օրական 15-20 տոննա) արտամղվում է նորատունկ այգու ոռոգման համար: Խորքային պոմպի աշխատանքի համար որպես էներգիայի աղբյուր ծառայում է արևային ֆոտովոլտային կայանը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

| № | Բնութագիր | Մեծությունը |
|---|---|---|
| 1 | Խորքային պոմպի անվանական հզորությունը | 0,75 կՎտ |
| 2 | Դուրս մղվող ջրի քանակը | 50 լ/րոպե |
| 3 | Ֆոտովոլտային կայանի անվանական հզորությունը | 2 կՎտ |
| 4 | Լարումը | 220 Վ |
| 5 | Հաճախականությունը | 50 Հց |

## ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ

| № | Օգուտներ (տարեկան) | Քանակ |
|---|---|---|
| 1 | ***Տնտեսական.***<br>• արտադրվող էլեկտրաէներգիա<br>• դրա շնորհիվ խնայվող դրամական միջոցներ<br>• այգուց սպասվող դրամական օգուտներ | <br>3400 կՎտ*ժ<br>158000 դրամ<br>4 մլն դրամ՝ աճման հեռանկարով |
| 2 | ***Բնապահպանական.*** մթնոլորտ չարտանետվող $CO_2$ գազ | 1,47 տ |
| 3 | ***Սոցիալական.***<br>• հիմնվել է մրգատու այգի<br>• այգուց ստացվող եկամուտները նպատակաուղղվում են համայնքի սոցիալական խնդիրների լուծմանը<br>• այգում աշխատում և վարձատրվում են գյուղի սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ<br>• ոչ ոռոգման սեզոնին արտադրվող էլեկտրական էներգիան օգտագործվում է համայնքի արտաքին լուսավորման համար | <br>մոտ 1 հա<br><br>4 աշխատող |

## ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՍԽԵՄԱՆ




**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ.** Արտակ Ղազարյան, հեռախոս. 093 00 11 23

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝


Կանաչ Տեխնոլոգիաների Հայկական Կենտրոն
Հասցե՝ քաղաք Գյումրի, Կարեն Դեմիրճյան փողոց, 3-րդ նրբանցք, 14 տուն
Հեռախոս՝ 077–99–34–77; 093-22-12-03
Էլ. փոստ՝ greentech.arm@gmail.com
Կայք՝ http://agtc.am/


*Էներգաարդյունավետ տեխնոլոգիական համակարգերը նախագծվում և իրականացվում են մեզ մոտ*